Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ **2019 թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը 09^{00}-ից մինչև 18^{00}-ն** ՀՀ փաստաբանների պալատի՝ Երևան քաղաքի Ջաքյան 7-2 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.

1) Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.

2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.

3) «Փաստաբանի օր» սահմանելու մասին:

Օրակարգային հարցերով **քվեարկությունը** սկսվում է **2019 թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը 09^{00}-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 18^{00}-ին**:

Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**

Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**

Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկություններին կարող եք ծանոթանալ ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 30.09.2019թ. թիվ 387-Լ որոշումը

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին ծանուցումը

Բեռնել ««Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանների առաջարկներն ընդունելու մասին» կարգը

Բեռնել ՀՀ ՓՊ խորհրդի 27.09.2019թ. թիվ 18/10-Լ որոշումը

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը

Բեռնել ՀՀ ՓՊ խորհրդի 27.09.2019թ. թիվ 18/11-Լ որոշումը

Բեռնել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի փոփոխությունների և լրացումների նախագիծը

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

աշխատակազմ